ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք,
հասցե՝ Վարդանանց հր. 1
հեռ. (+374312) 22203; 32606,
էլ.փոստ. Gyumri@Gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 11 >> փետրվարի 2014 թվականի N 23 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թամանյան փողոց 17/2 հասցեի շինությունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112013-08-0014): Այն կազմում է Թամանյան փողոց 17 հասցեում գտնվող «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի անբաժանելի մաս, և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել կամ օգտագործել համայնքի կարիքների համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հունվարի 20-ի N ԱԳ/207-14 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաք Գյումրի Թամանյան փողոց 17/2 հասցեի 322,89 (երեք հարյուր քսաներկու ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակության շինությունը և 13,16 (տասներեք ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
2. Նվիրաբերվող շինությունների կառուցապատման և սպասարկման համար զբաղեցված Գյումրի համայնքին պատկանող 0,024627 (զրո ամբողջ քսանչորս հազար վեց հարյուր քսանյոթ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասն օրենքով սահմանված կարգով տրամադրել անհատույց (մշտական) օգտագործման:

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2014թ. փետրվարի 11
ք.Գյումրի